ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԱՎԼԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո, բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և կոմունիստական գաղափարներ արմատավորելու նպատակով, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) ղեկավարությունը ձեռնամուխ եղավ հանրապետությունում քաղաքական վերահսկողության հաստատմանը: Դրան էին միտված կրթամշակութային հաստատությունների (թատրոն, կինո, թանգարան, գրադարան, գրախանութ և այլն), տպարանների, մինչև իսկ՝ երաժշտական գործիքների պետականացումը, հրատարակչական գործի կենտրոնացումը, այնուհետև "քաղաքական լուսավորության" կենտրոնացված համակարգի ստեղծմանն ուղղված քայլերն ու մամուլի պետական-կուսակցական վերահսկողությունը: Այս գործողություններին, բնականաբար, հաջորդեց գրաքննական համակարգի հաստատումը:

Արդեն 1921 թ. հուլիսից Խորհրդային Հայաստանում (խորհրդային Անդրկովկասում վերջինը) պարբերական մամուլի նկատմամբ նախնական ռազմական գրաքննություն էր իրականացվում Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից: Պարբերականների վերջին էջում պարտադիր նշվում էր ռազմական գրաքննության թույլտվության մասին: Հրապարակային միջոցառումների ընթացքում ռազմական գրաքննության շահերը հաշվի առնելու նպատակով Ռազմժողկոմատը համագործակցում էր Լուսավորության ժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության (քաղլուսգլխվարչություն) հետ: 1922 թ. հունիսին ռազմական գրաքննության գործառույթը Ռազմժողկոմատից փոխանցվեց Արտակարգ հանձնաժողովին, իսկ հուլիսին ՀՍԽՀ-ում ցուցադրական միջոցառումների (թատրոն, կինո, երաժշտություն և այլն) գրաքննությունը վերապահվեց Լուսժողկոմատի քաղլուսգլխվարչությանը: Աշնանը վարչությանը վերապահվեց նաև տպագրական գրաքննության լիազորությունը:*

Խորհրդային Ռուսաստանում քաղաքական լուսավորության աշխատանքների ծավալների ընդարձակման պայմաններում 1922 թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 1-ը Մոսկվայում տեղի ունեցավ համառուսաստանյան քաղլուսվարական

երրորդ համագումարը: Վերջինի որոշումները ոլորտում կտրուկ փոփոխություններ կատարելու տեսակետից սկզբունքային նշանակություն ունեցան:

Իհարկե, վերը նշված իրողությունը չշրջանցեց Խորհրդային Հայաստանը: Հանրապետությունում քաղաքական վերահսկողության և գրաքննության արմատավորման գործընթացի պայմաններում ՀՍԽՀ լուսժողկոմատի կոլեգիան համապատասխան որոշում ընդունեց Քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունում կառուցվածքային փոփոխություններ կատարելու, գոյություն ունեցող որոշ բաժիններ լուծարելու և նորերը կազմակերպելու մասին: 1923 թ. հունվարից Քաղլուսգլխվարչությունն ուներ 4 բաժին՝ իրենց ենթաբաժիններով: Դրանցից արտադպրոցական ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնի գեղարվեստական-դեկորային ենթաբաժնին էր վերապահված գրաքննական գործառույթը: Վարչության փոքրաթիվ աշխատակազմը և ֆինանսական միջոցների սղությունն արդյունավետ աշխատանք իրականացնելու հնարավորություն չէր ընձեռում:

1923 թ. մայիսի 15-ին պատրաստված Քաղլուսգլխվարչության վերակազմակերպման նախագծով նախատեսվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտպրոպբաժնի վարիչի տեղակալի (Քաղլուսգլխվարչության նախագահը) նախագահությամբ կազմակերպել խաղացանկային (ռեպերտուարային) հանձնաժողով, որի մեջ ընդգրկվելու էին ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի և զինվորական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի քարտուղարը, ով Քաղլուսգլխվարչության հաստիքացուցակում էր ընդգրկվելու, պետք է գրաքննության գծով տեխնիկական աշխատանք իրականացներ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության 1923 թ. մայիսի 23-ի նիստում հավանության արժանացավ Քաղլուսգլխվարչության վերակազմակերպման ծրագիրը, իսկ Կենտկոմի նախագահության հունիսի 4-ի նիստում՝ Գրականության, հրատարակչության և խաղացանկի (ռեպերտուարի) վերահսկողության վարչության կանոնադրության նախագիծը: Արդեն հունիսի 21-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը հաստատեց Գրականության, հրատարակչության և խաղացանկի վերահսկողության վարչության (պայմանականորեն այն անվանենք Հայգլավլիտ, ինչպես ընդունված է միութենական մյուս հանրապետությունների դեպքում) կանոնադրությունը:

Հայգլավլիտի կանոնադրության համաձայն՝ միաձուլվեց գրաքննության բնագավառում պետական-կուսակցական քաղաքականությունը: Այդ կանոնադրությունը, որով իր պրակտիկ գործունեության ընթացքում առաջնորդվում էր Հայգլավլիտը, Խորհրդային Ռուսաստանի լուսժողկոմատի Գլավլիտի 1922 թ. հունիսի 6-ի կանոնադրության տեղայնացված տարբերակն էր:*

Ստորև հրատարակվող փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ): Դրանք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Պահպանել ենք փաստաթղթերի լեզվառճական առանձնահատկությունները, կիսատ բառերը լրացրել և պակասողներն էլ ավելացրել ուղղաձիգ փակագծերում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

№ 1

ՀՍԽՀ քաղլուսգլխվարչության գրությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմակերպչական բաժնին՝ նոր աշխատակիցներ գործուղելու մասին

3 փետրվարի 1923 թ.
№ 334

Քաղլուսվարի աշխատանքների ծավալման հետևանքով, որով նոր բաժիններ է կազմակերպվում՝ համաձայն Մոսկվայի 3-րդ համագումարի կատարված որոշման և Լուսժողկոմի կոլեգիայի հաստատման, Գլխքաղլուսվարը խնդրում է գործուղել 6 ընկերներ հետևյալ պաշտոնների համար.

1. Կազմ[ակերպչական] բաժնի վարիչ,
2. Երկու հրահանգիչներ,
3. Ինֆորմացիոն ե/բ[1] վարիչ,
4. Գրաքննության բաժնի քարտուղար,
5. Ինքնազարգացման հանձնաժողովի նախագահ:

Նախքաղլուսվար՝ Դ. Դզնունի
Ի. տ. Կազմ[ակերպչական] բաժնի վարիչի՝ Բ. Աստունի
Գործավար (ստորագրություն)

Մակագրություն. «В Главполитпросвет. ...»[2]:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 145, թ. 26: Բնագիր: Մեքենագիր:

---

[1] *Ենթաբաժնի:*
[2] *Մակագրության շարունակությունն անընթեռնելի է:*

№ 2

ՀՍԽՀ քաղլուսգլխվարչության գրությունը լուսավորության ժողկոմատի Կազմակերպչական կենտրոնին՝ վարչության վերակազմության ծրագիրն ուղարկելու մասին[3]

15 мая 1923 г.
№ 1086

При сем препровождая проект реорганизации ГПП-а[4] прошу дать вопросу ходы, срочно разрешить его, ибо в таком положении дел, каковое сейчас существует [в] ГПП, дальнейшая работа невозможна и не плодотворна.

Предглавполитпросвета Д. Дзнуни
Заворготделом Б. Астуни

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 709, թ. 40: Բնագիր: Մեքենագիր:

*№*3

ՀՍԽՀ քաղլուսգլխվարչության վերակազմակերպման ծրագիրը[5]

15 мая 1923 г.

1. а) Ввиду того, что ГПП ССРА не обладает в достаточном количестве материальными ресурсами, что тяжело отражается на работе последнего.

б) Что развернувшийся аппарат ГПП-а, состоящий из 4-х отделов и 13-ти п/отделов, ни в коем случае не может быть руководим отпущенной сметой в размере 825 р. на квартал.

с) Что нет достаточного руководства работой ГПП-а со стороны Агитотдела ЦК КПА.

необходимо произвести следующую реорганизацию аппарата ГПП-а.

1. Оставляя в организационном отношении ГПП одним из главком Наркомпроса, для большей связи и непосредственного руководства аппаратом ГПП со стороны Агитотдела

---

[3] *Նույն գրությունն ուղարկվել է նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնին (ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 212, թ. 47):*

[4] Главполитпросвета ССРА.

[5] *Փաստաթուղթն ուղղված է ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնին, պատճենը՝ ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատին:*

ЦК, зав. ГПП назначить зам. зав. Агитотдела ЦК, в самом ГПП же заведующего агитпропотделом считать зам. зав. ГПП-ом.

2. Всей работой ГПП-а руководит Агитотдел через зам. завагита, каковой как пред. ГПП входит в коллегию Наркомпроса. ГПП отчитывается перед Агитотделом и Наркомпросом.

3. Аппарат ГПП сокращается до минимума:

а) Совершенно ликвидируются два отдела: организационно-инструкторский и программо-библиографический со всеми п/отделами, причем Дом внешкольного работника превращается в Дом работника просвещения с секцией Внешкольника, под руководством Союза работников просвещения.

б) Остается отдел внешкольной агитации и пропаганды с заведующим (он же зам. пред.), зав-щими двумя п/отделами, библиотечным и клубным (в последний входит также и театральная секция) и одним инструктором. Причем расходы по избам-читальням необходимо возложить на шеф ячейки над деревнями. При п/отделах, клубном и библиотечном, оставить центральное правление, клубное и библиотечное, из представителей Подива, КСМ, Милиции, Агитотдела и КО СПСА[6].

с) Также остается отдел школьно-курсовой агитации и пропаганды с одним заведующим и двумя инструкторами.

ПРИМЕЧАНИЕ: что касается канцелярии – таковая остается в случае, если ГПП будет помещается в отдельном помещении, причем работу Орготдела будет вести зам. пред. ГПП.

д) Производственная секция ликвидируется, причем книжные магазины подчиняются библиотечному п/отделу, зал ГПП-а (в здании Совнархоза) клубному п/отделу, а все кино будет под руководством и существующем при ГПП на хоз. расчете Гос. кино.

и) Для урегулирования дела цензуры, под председательством зам. зав. Агита ЦК организуется репертуарная комиссия, в каковую входят представители ГПУ и военных организаций. Комиссия имеет секретаря, каковой проходит по штатам ГПП и ведет техническую работу по цензуре, право выдачи разрешения на постановки спектаклей, концертов, кино-лент и прочее, а также издательство сосредоточено исключительно в руках председателя комиссии, за ГПУ же остается последующий контроль.

ф) Для общего идейного руководства работой политпросвет органов при ГПП остается коллегия в составе зав. КО СПСА, Завагита ЦК КСМ, Завагита Подива, Завагита ЦК и Начполитсекретариата Глав. милиции.

Принятие данного плана реорганизации аппарата ГПП и непосредственное приступление к его выполнении, считаю крайне необходимым, в противном случае бесплодное прозябание работников в этом громадном аппарате без ресурсов, считаю недопустимым при нашей скудности в работниках.

Предглавполитпросвета Д. Дзнуни

---

[6] *Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի (ՀԱՄԽ) մշակույթի բաժին:*

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 212, թ. 48: Բնագիր: Մեքենագիր: Ֆ. 122, ց. 1, գ. 709, թ. 41: Բնագիր: Մեքենագիր:

№ 4

Քաղվածք ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության նիստի արձանագրությունից՝
Քաղլուսգլխվարչության հարցի քննարկման մասին

23 мая 1923 г.
№ 7

Слушали: 1. О Главполитпросвете ([А.] Иоаннисян[7]).

Постановили: 1. а. Принципиально установить, что председатель Главполитпросвета одновременно замещает зав. агитпропотделом ЦК.

б. Завотделом агитации и пропаганды Главполитпросвета замещают председателя.

в. Для рассмотрения проекта цензуры создать комиссию в составе т. т. Дзнуни Д., Мадатова А.[8], Шавердова Д.[9] и Парзьяна Г.[10]

Созыв Комиссии поручить тов. Дзнуни Д. и предложить ему к следующему заседанию представить заключение комиссии по данному вопросу.

Слушали: 2. О конструировании Агитпропотдела ЦК ([А.] Шахсуварян[11]).

Постановили: 2. Зам. завагитпропотделом ЦК назначить тов. Дзнуни Д. и предложить НКПросу в недельный срок выдвинуть товарища на пост Зампредглавполитпросветом[12].

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 23: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№5

[7] ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարը (1922–1927 թթ.):

[8] ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի քաղաքական հսկիչը:

[9] ՀՍԽՀ արդարադատության ժողկոմը:

[10] ՀՍԽՀ ժողկոմխորհի քարտուղարը:

[11] ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար և Ագիտացիոն-պրոպագան-դիստական բաժնի վարիչը:

[12] 1923 թ. հունիսի 7-ին Քաղլուսգլխվարչության նախագահի տեղակալ նշանակվեց Ա. Իշխանյանը: Սեպտեմբերի 10-ին նրան փոխարինեց Գ. Քացախյանը:

Քաղվածք ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության նիստի արձանագրությունից՝ Հայգլավլիտի կանոնադրության նախագիծը հաստատելու մասին

4 июня 1923 г.
№ 8

Слушали: 7. Проект положения об Управлении по делам литературы, издательства и контроля за репертуаром ([Д.] Дзнуни).

Постановили: 7. Утвердить и передать СНК-ому на предмет декретирования[13].

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 25 շրջ.: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 6

Քաղվածք ՀՍԽՀ Ժողկոմխորհի նիստի արձանագրությունից՝ Հայգլավլիտի կանոնադրությունը հաստատելու մասին

21 հունիսի 1923 թ.
№ 16

Լսեցին. 23. Գրականության, հրատարակչության և ռեպերտուարի վրա վերահսկողության [վարչության] կանոնադրության հաստատման մասին:

Որոշեցին. 23. Հաստատել և շրջաբերականի ձևով ուղարկել հաստատություններին:

Ժողկոմխորհի քարտուղար՝ Գ. Պարզյան

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 132, թ. 13 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

---

[13] Քանի որ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության կողմից հաստատված Հայգլավլիտի կանոնադրության տարբերակը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 25ա և շրջ.) նույնությամբ համընկնում է հունիսի 21-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի կողմից հաստատված տարբերակի հետ, ուստի նպատակահարմար չենք գտել այն ընդգրկել հրապարակման մեջ:

№ 7

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Գրականության, հրատարակչության և ռեպերտուարի
վերահսկողության վերաբերյալ գործերի վարչության

21 հունիսի 1923 թ.[14]

1. Տպագիր երկերի գրաքննության և ռեպերտուարի վերահսկողության բոլոր ձևերը միացնելու նպատակով Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին առընթեր հիմնվում է Գրականության, հրատարակչության և ռեպերտուարի վերահսկողության վերաբերյալ գործերի վարչություն, որն ունի իր տեղական մարմինները ժողովրդական լուսավորության գավառական բաժիններին առընթեր:

2. Վարչությունը բաղկացած է Պետքաղվարի քաղաքական վերահսկողության մի ներկայացուցչից և Լուսժողկոմատի երկու ներկայացուցիչներից, որոնցից Գլխքաղլուսվարի նախագահը վարչության նախագահն է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գործավարության և հաշվապահության համար վարչությունը պաշտոնական քարտուղար ունի Գլխքաղլուսվարին առընթեր և օգտվում է Պետքաղվարի քաղաքական վերահսկողության շտատներից:

3. Գրականության, հրատարակչության և ռեպերտուարի վերահսկողության վերաբերյալ գործերի վարչության և յուր տեղական մարմինների պարտականությունն է.

ա. բոլոր տպագրելիք կամ տարածելիք թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր երկերի, պարբերական հրատարակությունների, արտանկարությունների, պատկերների, քարտեզների և այլնի նախաքննությունը,

բ. առանձին երկերի, այլև պարբերաթղթերի հրատարակության թույլտվությունը,

գ. ցանկեր կազմելը այն տպագիր երկերի, որոնց վաճառումն ու տարածելն արգելված է,

դ. բոլոր տպագրական օրգանների հրատարակությանց, տպարանների, գրադարանների, գրախանութների և արտանկարչության արհեստանոցների (լուսանկարչատների, կինոստուդիաների, տեղագրական արհեստանոցների և

---

[14] ՀՍԽՀ ժողկոմխորհի նիստում հաստատվելու ամսաթիվն է: Կանոնադրությունը ՀՍԽՀ լուսժողկոմատում ստացվել է 1923 թ. հուլիսի 5-ին:

այլն) համար պարտադիր կանոնների, կարգադրությունների և հրահանգների հրատարակությունը,

ե. ռեպերտուարներ դրամայի, օպերայի, օպերետայի համերգների, կինոժապավենների և այլն նայելը և նրանց հրապարակական ներկայացման կամ ցուցադրության թույլտվությունը,

զ. դասախոսություններ նայելը դասախոսների ներկայացրած թեզիսներով և նրանց թույլտվությունը:

4. Վարչությունը և յուր տեղական մարմինները արգելում են հրատարակությունը, տարածումը այնպիսի տպագիր երկերի և հրապարակական ներկայացումը կամ ցուցադրությունը այնպիսի գեղարվեստական գործերի կամ կինոժապավենների, որ.

ա. հակախորհրդային քարոզչության նշաններ են պարունակում,

բ. ռազմական կամ պետական գաղտնիքներ են հրապարակ հանում,

գ. խորհրդային կյանքի առանձին կողմերն են ծաղրում չարամտությամբ,

դ. կրոնական մոլեռանդություն, խիստ ցավագին անհատականություն, շովինիզմ և ազգայնականություն, պոռնկագրություն և արկածախնդրական ելուզակություն են պարունակում:

5. ՀԿԿ կ[ենտրոնական] կոմիտեի, գավկոմների և առհասարակ ամբողջ կոմունիստական կուսակցության մամուլը, այլն Կենտգործկոմի, Ժողկոմխորհի, Պետհրատի, Գավքաղլուսվարի հրատարակությունները և Գիտական ինստիտուտի գիտական աշխատանքներն ազատ են գրաքննությունից: Այս հրատարակությունների վերաբերությամբ վարչությունը և յուր տեղական մարմինները պարտավոր են միջոցներ ձեռք առնել զինվորական գրաքննության շահերն ըստ ամենայնի ապահովելու համար: Տեսչությանց հատուկ հրատարակությունները գրաքննությունից ազատվում են միայն վարչության և պատշաճ ժողկոմատի համաձայնությամբ:

6. Հանրապետության սահմաններում հրատարակվող բոլոր տպագիր երկերի և թատրոններում կամ բաց բեմերի վրա ցուցադրվող թատերական, համերգային և այլ բնագրերի ու կինոժապավենների վրա, բացի 5-րդ հոդ[վածում] հիշատակվածներից, պիտի լինի վարչության կամ նրա տեղական մարմինների վիզան:

7. Վարչության տեղական մարմինները կազմակերպվում են Գլխքաղլուսվարի և Գլխքաղվարչության ստորադրյալ մարմինների ներկայացուցիչներից՝ Գավքաղլուսվարի ղեկավարությամբ:

8. Տպարանների, արտանկարչական արհեստանոցների և տեսլահանդեսների ձեռնարկությանց վարիչները պարտավոր են անշեղ հսկողություն ունենալ, որ իրենց տպարաններում տպագրվող թատերախաղերի, համերգների և այլ բնա-

գիրներն ու երկերը, լույս տեսնող արտանկարներն ու ցուցադրվող ու հրապարակով կատարվող կինոժապավենները, բացի 5-րդ հոդվածում հիշատակված-ներից, վարչության կամ նրա տեղական մարմինների թույլտվության վիզան ունենան՝ հակառակ պարագային նրանք ենթակա են դատական պատասխանատվության:

9. Տպարանների և արտանկարչական արհեստանոցների տերերն ու վարիչ-ները պարտավոր են ներկայացնել գրաքննության մարմիններին ամեն տեսակ տպագիր և արտանկարած գործերից 5-ական օրինակ, իսկ ներկայացումների ձեռնարկությանց վարիչները պարտավոր են ներկայացնել ցուցադրվող գործե-րից (երաժշտություն, դրամա և բաց բեմերի վրա ներկայացվող) 5-ական օրի-նակ: Կինոն նույնպես ներկայացնում է բնագրերի գրքույկներից ու մակագրութ-յուններից հինգ-հինգ օրինակ և գրաքննության ներկայացուցիչների առաջ ի ցույց է հանում փորձնական ժապավենները:

Մակագրություն 1. "Հույժ գաղտնի":

Մակագրություն 2. "Արտատպել 5 օրինակ՝ 1. քաղլուսվարին[15], 2. լուսժողկոմին[16], 3. [Հ.] Յաղուբյանին[17], [4.] 2 [օրինակ պահել] գործերում":

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 1, թ. 54 և շրջ.: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Ֆ. 122, ց. 1, գ. 121, թ. 133 և շրջ.: Պատճեն: Մեքենագիր:

---

[15] *Դանիել Դգնունուն:*

[16] *Ասքանազ Մռավյանին:*

[17] *Լուսժողկոմատի կոլեգիայի անդամ և կազմակերպչական կենտրոնի վարիչ:*